ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԻԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 21 - 22 (16319) ՇԱԲԱԹ, 28 ՄԱՐՏԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՀՍՏԱԿ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Մարտի 26-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին անցկացրեց մամլո ասուլիս, որտեղ ներկայացրեց իր գլխավորած կառավարության կողմից իրականացված աշխատանքը: Նրա խոսքերով, ցավոք, հասարակայնությունը լրիվությամբ տեղեկացված չէ երկրի կառավարության կողմից իրականացված աշխատանքների մասին:

Ներկայացնելով գործադիր իշխանության ձեռքբերումները, վարչապետն առաջին հերթին նշեց «C» հեպատիտի դեմ պայքարի ծավալուն նախագիծը: Նրա խոսքերով, այս տարի ԱՄՆ-ից Վրաստան է նեկրվելու դեղորայք, որը մատչելի կլինի բոլորի համար:

Իրակի Ղարիբաշվիլու խոսքերով, կառավարությունը հաջողության է հասել օտարերկրյա անմիջական ներդրումների եւ ՀՆԱ-ի ավելացման գործում: Ինչպես նշեց վարչապետը, նկատելիորեն ավելացել է նաեւ գործընկեր երկրների հետ ապրանքաշրջանառության ծավալը, փոքր եւ միջին ձեռներեցությունը, ինչը նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Վարչապետի խոսքերով, ազգային տարադրամի՝ լարիի արժեզրկման պայմաններում, կառավարության գլխավոր առաջնահերթությունը տնտեսական կայունության ապահովումն է: Նրա խոսքերով, ար-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ԱԼՅԱՆՍԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Վրաստանում գտնվող ՆԱՏՕ-ի խորհրդարանական ասամբլեայի պատվիրակության հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի համագործակցության հետ առնչվող հարցեր: Ընդգծվեց այդ համագործակցության խորացման գործում ՆԱՏՕ-ի խորհրդարանական ասամբլեայի կարեւոր նշանակությունը:

Հանդիպմանն առանձնակի ուշադրություն հատկացվեց Վրաստանի բռնազավթված տարածքներին: Ալյանսի խորհրդարանական ասամբլեայի ներկայացուցիչները կրկին ընդգծեցին Մոսկվայի կողմից Սուխումիի եւ Ցխինվալիի հետ ձեւակերպած, այսպես կոչված, դաշնակցության եւ ինտեգրման մասին պայմանագրի անօրինական բնույթը:

Ալյանսի ներկայացուցիչները Վրաստանում շնորհակալություն հայտնեցին ՆԱՏՕ-ի խաղաղարարական առաքելություններում Վրաստանի ակտիվ մասնակցության համար:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԷԻՆ

Մարտի 24-26-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Նորվեգիայի խորհրդարանի նախագահ Օլեմիկոմ Թոմեսենը:

Այցի շրջանակներում՝ հյուրը հանդիպումներ ունեցավ իր վրաց գործընկեր Դավիթ Ուսուփաշվիլու, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլու հետ:

Վրաստանի եւ Նորվեգիայի օրենսդիր մարմինների ղեկավարների հանդիպման ավարտից հետո անցկացված համատեղ մամլո ասուլիսում նշվեց, որ կողմերը քննարկել են քաղաքականության, էկոնոմիկայի եւ մշակույթի ոլորտում համագործակցության խորացման հեռանկարները: Անդրադարձ է կատարվել նաեւ Վրաստանի եվրոպական ինտեգրման, ՆԱՏՕ-ի հետ փոխհարաբերությունների զարգացման, տարածաշրջանում ստեղծված իրավիճակի եւ այստեղ առկա հիմնախնդիրների կարգավորման գործում Եվրոպայի երկրների ակտիվ մասնակցության թեմային:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

Մարտի 23-ին, Ախալքալաքիում, անցկացվեց Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանի խորհրդատվական խորհրդի արտագնա նիստը:

Նիստին քննարկվեցին տարածաշրջանի մունիցիպալիտետներում իրականացվող ենթակառույցային նախագծերը, դրանց փորձաստուգման եւ վերահսկողության հարցերն ու հայտնաբերած թերացումները: Քննարկվեց նաեւ պետգնումների գործընթացում ծագած հիմնախնդիրների հարցը:

Նիստում քննարկվեցին նաեւ այն հիմնախնդ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՊԱՇՏՈՆԱԿԱԼՈՒՄ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀԸ ՍՏԱՆՁՆԵՑ ՊԱՇՏՈՆԸ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, մարտի 23-ին պաշտոնապես ներկայացրեց Վրաստանի Գերագույն դատարանի նոր նախագահ Նինո Գվենետածեին:

Գերագույն դատարանի նոր նախագահի ներկայացման արարողությանը ներկա էին Գերագույն դատարանի նախկին նախագահ Կոնստանտինե Կուբլաշվիլին, դատավորներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների ներկայացուցիչներ:

Հիշեցնենք, որ մարտի 20-ին Վրաստանի խորհրդարանը պաշտպանեց երկրի Գերագույն դատարանի պաշտոնում՝ Նինո Գվենետածեի թեկնածությունը:

Ներկայացման արարողությանը ելույթ ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Կոնստանտինե Կուբլաշվիլին:

Գերագույն դատարանի նախագահի պաշտոնում գործունեության առաջնահերթությունների եւ գերակայությունների մասին իր ծրագրային խոսքով ելույթ ունեցավ Գերագույն դատարանի նորանշանակ նախագահ Նինո Գվենետածեն:

Նկարում.- Վրաստանի նախագահը՝ Գերագույն դատարանի նոր եւ նախկին նախագահների հետ:

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՀԵՏ ՆՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Մարտի 24-ին Թբիլիսիում անցկացվեց դոնորների ամենամյա կոորդինացիոն գագաթաժողովը, որի աշխատանքին մասնակցեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Ելույթ ունենալով գագաթաժողովում վարչապետը հայտարարեց, որ կառավարության աշխատակազմը դոնորներին կներկայացնի կոնկրետ նախագծերի արդյունավետ իրականացմանն ուղղված համագործակցության նոր ձեւաչափ: Վարչապետի խոսքերով, շատ նախագծեր գտնվում են իրականացման փուլում, ինչը երկրի քաղաքացիներին հուսադրում է, որ Վրաստանը մեծ հնարավորություններ ունեցող երկիր է:

Վարչապետի հավաստմամբ, ներկայացնող նոր ձեւաչափը յուրատեսակ երաշխիք կհանդիսանա դոնոր երկրների եւ կազմակերպությունների համար, որ ներդրած միջոցները իրականում կնպաստեն ներկայացված ծրագրերի իրականացմանը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Մարտի 25-ին Վրաստանի փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանի հետ:

Հանդիպմանը քննարկվել է երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ: Անդրադարձ է կատարվել վրաց–հայկական տնտեսական ներկայիս հարաբերություններին, ինչպես նաեւ դրանց հետագա զարգացմանն ու ընդլայնման հեռանկարներին: Երկուստեք կարեւորվել է զբոսաշրջության եւ էկոնոմիկայի ոլորտում համատեղ ծրագրերի առավել ակտիվացման անհրաժեշտությունը:

Մտքեր են փոխանակվել տնտեսական ոլորտում վրաց-հայկական համագործակցությանն առնչվող հարցերի շուրջ:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Եվրամիության հետ ասոցիացման համաձայնագրի ստորագրմամբ, որը ներառում էր նաեւ խոր եւ համընդգրկուն ազատ առեւտրի մասին պայմանավորվածությունը, անցյալ տարի կարեւորագույն փուլ դարձավ Վրաստան-Եվրամիություն հարաբերություններում:

2014 թվականի հարաբերությունների հանրագումարման, ստորագրած ասոցիացման համաձայնագրի կատարման ընթացքի հրապարակված հաշվետվությունում նշված է, որ անցյալ տարի քաղաքական երկխոսությունը Վրաստանի եւ Եվրամիության միջեւ ակտիվացվեց, ընթացքի մեջ են այցեգրային պայմանակարգի ազատականացման բանակցությունները, այցեգրային համակարգի դյուրացմանն ուղղված միջոցառումները: Հաշվետվության մեջ նշված է, որ Վրաստանում շարունակվում են ժողովրդավարական բարեփոխումները, կոնկրետ քայլեր են իրականացվում մարդու իրավունքների եւ հիմնական ազատությունների ուղղությամբ, սկսվել են սահմանադրական եւ դատական բարեփոխումները:

Ազատ առեւտրի գոտու ստեղծման, դատական, պետական հաստատությունների, գյուղատնտեսական ձեռներեցության եւ մարդու իրավունքների զարգացման աջակցության համար, 2014 թվականին Եվրամիությունը եվրոպական հարեւանություն կազմակերպության միջոցով Վրաստանին փոխանցել է 131 միլիոն եվրո: Հաշվետվությունում ներկայացված են նաեւ հանձնարարականներ, մասնավորապես խոսքը վերաբերում է իշխանության ճյուղերի սահմանազատման, դատական համակարգի բարեփոխման ակտիվացման, ինչպես նաեւ իրավապահ մարմինների աշխատակիցների պատասխանատվության ավելացմանը:

ԿՊԱՀԱՆՋՎԵՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլին հայտարարեց, որ Վրաստանի քաղաքացիները Ռիգայի գագաթաժողովի ավարտից անմիջապես հետո դեռեւս իրավունք չեն ունենա ազատ տեղաշարժվել երկրների շենգենյան գոտու տարածքում: Նրա խոսքերով, դրա համար կպահանջվի քաղաքական լրացուցիչ աջակցություն:

«Վրաստանի կառավարությունն ինտենսիվորեն գործում է Եվրամիության երկրների նկատմամբ առկա բոլոր ընթացակարգերի եւ մեթոդների, ինչպես նաեւ այցեգրերի ազատականացման ընթացակարգի հաշվառմամբ: Գնահատման առաքելությունն արդեն ավարտել է աշխատանքը: Ներկայումս սպասում ենք փորձագետների եզրակացությանը: Մենք հնարավոր ամեն ինչ արեցինք, որպեսզի Ռիգայում անցկացվելիք գագաթաժողովը լինի արգասաբեր եւ ունենա համապատասխան քաղաքական աջակցություն: Ինչ վերաբերում է պրակտիկ քայլերին, ապա կարծիքն այն մասին, որ կենսաչափական անձնագիր ունեցող Վրաստանի քաղաքացիները կարող են հանգիստ տեղաշարժվել երկրների շենգենյան գոտում, Ռիգայի գագաթաժողովի ավարտից հետո միանգամից չի իրականացվի: Դրա համար կպահանջվի լրացուցիչ քաղաքական աջակցություն: Վերջնական որոշումն ընդունելու է Եվրամիության երկրների խորհուրդը»,- հայտարարեց Վրաստանի ԱԳ նախարար Թամար Բերուչաշվիլին:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՀԱՎԱՔ՝ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՊԱՀԱՆՋՈՎ

Մարտի 21-ին Թբիլիսիում տեղի է ունեցել «Միասնական ազգային շարժման» եւ նրա կողմնակիցների ակցիան՝ կառավարության պաշտոնաթողության պահանջով:

Քաղաքի կենտրոնական փողոցներով անցկացված երթերից եւ Ազատության հրապարակում հանրահավաքից հետո, ակցիայի մասնակիցները շարժվել են դեպի Պետգրասենյակի շենք, որտեղ Վրաստանի կառավարությանը փոխանցել են խորհրդանշական «կարմիր քարտ», արձակել են շնաձկների եւ պինգվինի տեսքով օդապարիկներ, ինչից հետո ցրվել են:

Ակցիայի մասնակիցներին, օնլայն կապով դիմել է Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլին:

Կազմակերպիչների հայտարարությամբ, բողոքի ակցիային մասնակցել է շուրջ 50 հազար մարդ, թեպետ առավել իրատեսական թիվը համարվում է 10-15 հազարը:

Հանրահավաքի մասնակիցները պահանջում են կառավարության եւ վարչապետի հրաժարականը, ինչպես նաեւ դեմ են արտահայտվում «Վրացական երազանք» կառավարող կոալիցիայի հիմնադիր Բիձինա Իվանիշվիլու գործողություններին, որը, ինչպես պնդում է ընդդիմությունը, շարունակում է երկիրը կառավարել «կուլիսների հետեւից»:

Ներկայացվող մեղադրանքները վերաբերում են տնտեսական անկմանն ու Վրաստանի ազգային արժույթը՝ լարիի արժեզրկմանը, որը նոյեմբերից հետո անցած ժամանակահատվածում դոլարի նկատմամբ թանկացել է մոտավորապես 20 տոկոսով: Ընդդիմությունը եւ փորձագետները դրա համար մեղադրում են հանրապետության իշխանություններին:

Ակցիայի ավարտից հետո խորհրդարանական ընդդիմության ղեկավարները հայտարարել են, որ «Միասնական ազգային շարժումը» հաջորդ շաբաթվանից մտադիր է ստորագրահավաք սկսել Վրաստանի կառավարությանն անվստահություն հայտնելու համար:

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱԶԳԱՅԻՆՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԽԱՆԳԱՐԵԼ ՎՐԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ»

Մեկնաբանելով բազմահազարանոց բողոքի ակցիան, որը կառավարության հրաժարականի պահանջով «Ազգային շարժման» կողմից մարտի 21-ին կազմակերպվել էր Թբիլիսիի կենտրոնում, վարչապետը հայտարարել է, որ դրա համար միլիոններ են ծախսվել:

Մարտի 26-ին անդրադառնալով Թբիլիսիում ընդդիմության կողմից անցկացված հանրահավաքին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին «Միասնական ազգային շարժում» նախկին կառավարող կուսակցությանն անվանեց աղանդ եւ նշեց, որ նրան չի հաջողվի խանգարել երկրի զարգացմանը:

«Այդ մարդիկ վերածվել են անհասկանալի աղանդի: Նրանք կողմնորոշված են ոչ թե երկրի զարգացմանը, այլ՝ քայքայիչ գործողությունների, ալեկոծումներ առաջացնելուն, մանավանդ, որ նրանք ունեն ուժեղ հեռուստատեսություն եւ ունեն քայքայիչ ուժեր, որոնք գործում են դրսից, ինչին պետությունը համարժեք պատասխան կտա»,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Միաժամանակ, վարչապետը Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու կուսակցությանը խորհուրդ տվեց չփորձել խանգարել երկրի զարգացմանը: «Պետությունը շատ անողոք կլինի, իհարկե, օրենքի շրջանակներում, եւ ես խորհուրդ չեմ տալիս «Ազգային շարժմանը»՝ ամենաքայքայիչ ուժին, որեւէ բան պլանավորել... Ներկայիս գործընթացներին խանգարելու «Ազգային շարժման» հնարավորությունները հավասար են զրոյի, քանի որ աշխարհում ոչինչ չի կարող խանգարել զարգացմանը»,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՍԱԱԿԱՇՎԻԼՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀՈՒՅՍԵՐԸ ՊԱՏՐԱՆՔԱՅԻՆ ԵՆ»

Վրաստանի նախկին վարչապետ, իշխող «Վրացական երազանք» կոալիցիայի հիմնադիր Բիձինա Իվանիշվիլին ժողովրդավարական քայլ է համարել այն, որ երկրի ղեկավարությունը նախկին կառավարող կուսակցությանը՝ հանրապետության նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու «Միասնական ազգային շարժմանը», թույլ տվեց ակցիա անցկացնել Թբիլիսիի կենտրոնում, որին, նրա տվյալներով, եկել էր ոչ թե 50 հազար մարդ, ինչպես պնդում են կազմակերպիչները, այլ 5-7 հազար քաղաքացի:

«Հավաքելով 5-7 հազար մարդ՝ «Ազգային շարժման» անդամները ցույց տվեցին, որ իրենք դեռ ողջ են: Նրանք լկտի հայտարարություններ էին անում եւ միանգամայն առանց պատճառի պահանջում այն կառավարության հրաժարականը, որին ընտրել է ժողովուրդը»,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին՝ իր վերլուծական հաղորդման ժամանակ:

Վրաստանի նախկին վարչապետը պատրանքային է համարում իշխանությունը վերադարձնելու Սաակաշվիլու կուսակցության հույսերը:

Սաակաշվիլին ավելի վաղ հայտարարել է, որ իր թիմն ընտրությունների ճանապարհով իշխանության կվերադառնա 2016 թվականին:



ԱՄՆ
ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ԶՈՐԱԿԱԶՄԸ ՉԻ ԿՐՃԱՏՎԻ

ԱՄՆ-ը մինչեւ ընթացիկ տարվա վերջը չի կրճատի Աֆղանստանում գտնվող իր զորքերի թվաքանակը: Այն կմնա ներկայիս 9,8 հազարի մակարդակին: Այդ մասին ասված է համատեղ հայտարարության մեջ, որն ընդունվել է Սպիտակ տանը երկու երկրների նախագահների՝ Բարաք Օբամայի եւ Աշրաֆ Ղանի Սիմադզայի միջեւ կայացած բանակցությունների արդյունքում: Փաստաթղթում նշված է նաեւ, որ «2016 թվականին Աֆղանստանից ԱՄՆ-ի զորքերի դուրսբերման տեմպերը կորոշվեն ավելի ուշ այս տարվա ընթացքում»: Սպասվում է, որ մինչեւ 2016 թվականի վերջը այդ երկրում տեղաբաշխված ամերիկացի բոլոր զինծառայողները «կկենտրոնացվեն Քաբուլում ԱՄՆ-ի դեսպանատան տարածքում», նշված է փաստաթղթում:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ մինչեւ 2015 թվականի վերջը Աֆղանստանում պետք է մնան 5,5 հազար ամերիկացի զինծառայողներ:

2011 թվականին Աֆղանստանում ԱՄՆ-ի զորակազմը ներառում էր 101 հազար մարդ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ
ԶՈՀՎԵԼ է ՎԻԿՏՈՐ ՅԱՆՈՒԿՈՎԻՉԻ ՈՐԴԻՆ

Մարտի 22-ին տեղեկատվություն էր ստացվել Բայկալ լճում դժբախտ պատահարի հետեւանքով Վիկտոր Յանուկովիչի կրտսեր որդու զոհվելու մասին. Volkswagen-ը, որի ղեկին եղել է Յանուկովիչ Կրտսերը, ընթացել է սառցի վրայով, այն չի դիմացել, եւ ավտոմոբիլն ընկել է ջուրը: Ավտոմեքենայում եղել է յոթ մարդ, բոլորը, բացի վարորդից, կարողացել են դուրս գալ ավտոմեքենայից:

Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչը ներկա է եղել որդու՝ Վիկտորի հուղարկավորությանը Սեւաստոպոլում:

ՖՐԱՆՍԻԱ
ԱՎԻԱՎԹԱՐ. ԶՈՀՎԵԼ է 150 ՄԱՐԴ
ՄԵՂԱՎՈՐԸ՝ ԵՐԿՐՈՐԴ ՕԴԱՉՈ՞ՒՆ

Germanwings ընկերության ինքնաթիռը, որը Բարսելոնից ընթանում էր Դյուսելդորֆ, մարտի 24-ին կործանվել է Ֆրանսիայի հարավ-արեւելքում: Աղետը տեղի է ունեցել Վերին Պրովանսի Ալպեր դեպարտամենտում Տրուա-է-վեւշե դժվարամատչելի լեռնազանգվածի շրջանում՝ Դին լե Բեն բնակավայրի մերձակայքում: Ընդամենը օդանավում եղել է 150 մարդ՝ 144 ուղեւոր եւ անձնակազմի վեց անդամ: Ինքնաթիռի կործանման զոհ են դարձել 15 երկրների քաղաքացիներ, նրանցից 72-ը Գերմանիայի քաղաքացիներ են, 35-ը՝ Իսպանիայի:

Մարսելի դատախազ Բրիս Ռոբենի հայտարարությամբ՝ ինքնաթիռի երկրորդ օդաչու Անդրեաս Լյուբիցի նկատմամբ, որն օդանավն ուղղել է գետնին, գործ են հարուցել «կանխամտածված սպանություն» մեղադրանքով: Նա ընդգծել է, որ Լյուբիցը միտումնավոր է կրճատել օդանավի բարձրությունը: «Նա դա արել է դեռեւս մեզ անհայտ պատճառով, մենք միայն գիտենք, որ նա է կործանել ինքնաթիռը»,- ընդգծել է դատախազը:

ՄԱԿ
ԷԲՈԼԱՅԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԸ ՕԳՈՍՏՈՍԻՆ ԿԱՎԱՐՏՎԻ

Աշխարհում էբոլա տենդի համաճարակը կավարտվի օգոստոսի վերջին: Այս կարծիքը հայտնել է ՄԱԿ-ի՝ էբոլայի արտակարգ հակազդման առաքելության ղեկավար Իսմայիլ Ուլդ Շեյխ Սիմեդը: Արեւմտյան Աֆրիկայում էբոլա տենդի բռնկումն սկսվել էր 2014 թվականի փետրվարին: Վիրուսից ամենից շատ տուժել են Գվինեան, Լիբերիան եւ Սիեռա Լեոնեն: Վերջին ժամանակներս հիվանդության նոր դեպքերի թիվն զգալիորեն կրճատվել է, ինչը թույլ է տալիս ասել, որ համաճարակն անկում է ապրում: Ընդամենը, ըստ վերջին տվյալների, տենդից տուժել է 24,7 հազարից ավելի մարդ, 10 հազար 194 վարակվածներ մահացել են:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՆՈՐ ԿԼԻՆԻԿԱ

ԲԱՑՎԵՑ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մարտի 25-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, փոխվարչապետ, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտանության նախարար Դմիտրի Սերգեենկոն, ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, կրթության նախարար Թամար Սանիկիձեն, Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան Թբիլիսիի բժշկական համալսարանի տարածքում մասնակցեցին համալսարանական կլինիկայի բացման արարողությանը: Արդի լաբորատորիայով ռադիոլոգիկ ախտորոշման եւ բարձր տեխնոլոգիական բժշկական սարքավորումներով հագեցված կլինիկան նախատեսված է 185 մահճակալի համար: Համալսարանում միաժամանակ անցկացվեց հետազոտությունների եւ նորամուծությունների խորհրդի նիստը, որը նախագահում էր Վրաստանի վարչապետը: Նիստի ավարտից հետո Նոդար Խադուրին հայտարարեց, որ նախարարությանը տրվել են լրացուցիչ հանձնարարություններ, ըստ որի՝ ստեղծվելու են աշխատանքային խմբեր, որոնք մշակելու են գիտության եւ տեխնիկայի զարգացման ծրագրերը:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րային հարցերը, որոնց լուծումը դուրս է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներից եւ դրանց կարգավորման համար պահանջվում է կենտրոնական գերատեսչությունների ներգրավումը: Նիստի օրակարգում ներառվել էր նաեւ բյուջետային պակասորդի կառավարման նպատակով վարչական ծախսերի նվազեցմանն ուղղված մունիցիպալիտետներում ծրագրված միջոցառումների, գործի էլեկտրոնային վարման համակարգի ներդրման գործընթացի, ամառային հանգստյան-զբոսաշրջության սեզոնի նախապատրաստման եւ ծրագրված ակտիվությունների մասին հարցը:

Տարածաշրջանային խորհրդատվական խորհրդի նիստին ներկա էին Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում պետական լիազոր-նահանգապետ Ակակի Մաչուտաձեն, փոխնահանգապետ Ավթանդիլ Կաճկաճաշվիլին, տարածաշրջանային նախագծերի համակարգման ծառայության պետ Մարինա Գաչեչիլաձեն, Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Ախալցիխեի եւ երկրամասի մյուս մունիցիպալիտետների վարչությունների ու սակրեբուլոների նախագահները, պաշտոնական այլ անձինք:

ՌԱԶՄԱԿԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Վրաստանի պաշտպանության նախարար Մինդիա Ջանելիձեն պաշտոնական եռօրյա այցով գտնվում էր Ֆրանսիայում: Այցի շրջանակներում նա հանդիպում ունեցավ Ֆրանսիայի պաշտպանության նախարար Ժան Իվ Լե Դրյանի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների միջեւ պաշտպանության ոլորտում համագործակցության ներկայիս վիճակի եւ առաջիկայում դրանց զարգացման հեռանկարների հետ առնչվող հարցեր: Կողմերն անդրադարձ կատարեցին նաեւ եվրատլանտյան կառույցների Վրաստանի անդամակցության հարցին: Ֆրանսիայի պաշտպանության նախարարը վրացական կողմին շնորհակալություն հայտնեց Եվրամիության խաղաղարար առաքելություններում մասնակցության համար: Կողմերը քննարկեցին նաեւ տարածաշրջանային անվտանգության հարցերը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՆԿԱՆՈՒՄ Է

Ազգային տարադրամի՝ լարիի արժեզրկման պատճառով, երկրում գրանցվել է պարենամթերքի, դեղորայքի, բժշկական սպասարկումների գների ավելացում:

Աստիճանաբար թանկանում է նաեւ առողջության ապահովագրությունը: Ապահովագրական ընկերություններն արդեն ավելացրել են սակագները, թեպետ, ներկա դրությամբ, ավելացումն աննշան է: Ապահովագրական պոլիսների թանկացման հիմնական պատճառը դեղորայքի եւ բժշկական սպասարկումների գների ավելացումն է: Ինչպես տեղեկացրել է վիճակագրական ծառայությունը, 2014 թվականին առողջապահության ոլորտում գներն անընդմեջ ավելացել են եւ այդ միտումը շարունակվում է 2015 թվականին: Մասնավորապես, սպասարկումները թանկացել են 7,3 տոկոսով, բժշկական ապրանքները, սարքերն ու սարքավորումների գինն ավելացել է 15,8 տոկոսով: Փետրվարին բժշկական սպասարկումների սակագինը ավելացել է 6,4 տոկոսով, իսկ սարքավորումների եւ սարքերի արժեքը՝ 11,1 տոկոսով, ամբուլատորային սպասարկման գինը՝ 4,4 տոկոսով, հիվանդանոցինը՝ 5,2 տոկոսով:

Ինչպես նշում են ապահովագրական ընկերություններում, բժշկական սպասարկումների սակագնի աճը նկատվում էր դեռեւս մինչեւ ազգային տարադրամի արժեզրկումը, թեպետ դրա տատանումը լուրջ հիմնախնդիրներ առաջացրեց: Ինչպես նշում են ապահովագրական ընկերություններում, համակարգում ներկայիս գնագոյացումը չի հասցնում արձագանքել լարիի կուրսի փոփոխությանը, հետեւաբար ողջ համակարգը անընդմեջ գտնվում է մարտահրավերների առջեւ:

ՊԱՐՏՔԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՔԱՎՈՐՈՒՄ

Վրաստանի կոմերցիոն բանկերը պարտքերի վերակառուցքավորման համար անհատական բանակցություններ են վարում այն հաճախորդների հետ, ովքեր վարկը ստացել են դոլարներով, իսկ եկամուտը ստանում են ազգային տարադրամով: Թեպետ կոմերցիոն բանկերը չեն գտնում, որ տարադրամի առումով երկրում առանձնակի իրավիճակ է եւ սպասում են մոտ ժամանակներս դրա կարգավորմանը: Ինչպես նշեց **«Պրոկրեդիտբանկի»** գլխավոր տնօրեն Ասմուս Ռոտնեն, բանկը քննարկում է պարտապանների հիմնախնդիրները, թեպետ միաժամանակ ուշադրությամբ հետեւում է ազգային տարադրամի տատանմանը: Հետեւաբար, վերոնշյալ հիմնախնդիրը որոշակիորեն կորցրել է սրությունը: «Հաճախորդի վարկային պատմության բնորոշումը կարեւոր չէ: Առավել նշանակալից է նրա մոտեցումը պարտքի վճարման երկարաձգման հարցում»,- հայտարարեց նա:

«Ռեսպուբլիկա» բանկի գլխավոր տնօրեն Անտուան Գաբիզոնսի խոսքերով, Վրաստանի տնտեսական հեռանկարները բավականին խոստումնալից են: «Մենք ուշադրությամբ հետեւում ենք գործընթացներին եւ լուրջ անհանգստության պատճառ չենք տեսնում: Առանձին պարտապաններ կարող են հայտնվել բարդ իրավիճակում, թեպետ նրանց թիվը մեծ չէ: Ներկայումս մենք քննարկում ենք իրավիճակի կարգավորման հնարավորությունները: Ամեն ինչ կախված է կոնկրետ պարագայից՝ վարկի մեծությունից, տեսակից, պարտապանի եկամուտներից եւ այլն: Ելնելով այդ տվյալներից, կազմվում է հատուկ ծրագիր հիմնախնդրի կարգավորման համար»,- հայտարարեց նա:

Իր հերթին, **«Լիբերթի»** բանկի գլխավոր տնօրեն Գիորգի Արվելաձեն հայտարարեց, որ բանկի կողմից տրված վարկերի 96 տոկոսը վերաբերում է ազգային տարադրամին, միայն 4 տոկոսն է տրված օտարերկրյա տարադրամով, դրանք հիմնական կոոպերատիվ վարկերն են: «Հետեւաբար, դոլարով վարկ վերցրած եւ լարիով եկամուտ ունեցող հաճախորդների թիվն այնքան էլ մեծ չէ, թեպետ մենք պատրաստ ենք անհատապես բանակցել յուրաքանչյուրի հետ՝ պարտքի վերակառուցքավորման հարցով»,- հայտարարեց նա:

«Կորստանդարտբանկի» ռիսկերի հարցերով, տնօրեն Թեմուր Աբուլաձեի խոսքերով, ստեղծված իրավիճակից լավագույն ելքը՝ դա վարկերի վճարման ժամկետի երկարաձգումն է, այն հաշվով, որպեսզի ամենամսյա վճարումները չավելացվեն:

«Ներկա դրությամբ, այդ առումով հիմնախնդիրներ չեն ծագել, քանի որ նախօրոք մենք հաշվարկել ենք այն ռիսկերի հնարավորությունը, որոնք կարող են ծագել ազգային տարադրամի փոխարժեքի նվազեցման դեպքում: Սակայն, եթե հաճախորդը բանկին դիմի պարտքի վերակառուցքավորման պահանջով, ապա մենք պատրաստ ենք երկարաձգել վարկի վճարման ժամկետը: Մենք շահագրգռված չենք պարտապանի գույքի վճարման հարցում, մեզ առավել ձեռնտու է գործ ունենալ կայուն դիմորդների հետ: Միաժամանակ, պետք չէ մոռանալ, որ բանկը դա բարեգործական կազմակերպություն չէ, եւ մենք ձրի ոչ մեկին գումար չենք տրամադրում»,- հայտարարեց նա:

ՔԵԹԵՎԱՆ ՄՂԵԲՐԻՇՎԻԼԻ



ՄԱՐՏԻ 25-Ը՝ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐ



Մարտի 25-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշեց ինքնության (ավտոկեֆալիայի) վերականգնման օրը: Օրվա կապակցությամբ, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը Սիոնի տաճարում մատուցեց հանդիսավոր պատարագ:

Վրաց Ուղղափառ եկեղեցու ղեկավարը իր խոսքում հիշեցրեց, որ վրաց եկեղեցին Անտիոքի եկեղեցուց ինքնությունն ստացել էր 457 թվականին: Այն ռուսական կայսրությունը վերացրեց 1811 թվականին: Վրաց Ուղղափառ եկեղեցին ավտոկեֆալիան վերադարձրեց 1917 թվականի մարտի 25-ին:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՆՈՎՐՈՒԶ ԲԱՅՐԱՄԻ ԱՌԹԻՎ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին մարտի 21-ին եղան Մառնեուլիում եւ տեղի բնակիչներին շնորհավորեցին Նովրուզ Բայրամի առթիվ: Նրանք դիտեցին տոնի առթիվ կազմակերպված ցուցահանդեսը, ներկա եղան անցկացված համերգին:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

Վրաստանի կողմից, Եվրոպայի վերակառուցքավորման եւ զարգացման բանկի կառավարիչ, Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրու նախագահությամբ, անցկացվեց EBRD ամենամյա հանդիպման կազմակերպման կառավարական հանձնաժողովի հերթական նիստը: Նիստում տեղեկատվություն ներկայացվեց հանդիպման նախապատրաստման ենթակառուցային աշխատանքների իրականացման ընթացքի մասին, որոնք իրականացվում են Վրաստանի խորհրդարանի եւ սովորող երիտասարդության պալատի հարակից տարածքում: Նշվեց, որ, հանդիպումը բարձր մակարդակով անցկացնելու նպատակով, հյուրերին տրվելու է Վրաստանի ներդրումային, զբոսաշրջության եւ մշակութային ներուժի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն:

Նոդար Խադուրու հայտարարությամբ, հանձնաժողովի աշխատանքի թափանցիկության ապահովման նպատակով, կիրականացվի միջոցառման շրջանակներում իրականացվող գնումների եւ մրցույթների հրապարակում, ինչը թույլ կտա հասարակությանը մանրամասն տեղեկատվություն ստանալ իրականացված աշխատանքների մասին:

ԱՐԹՈՒՐ ՄԻՔՎԱԲԻԱՆ՝ ԻՆՔՆԱՀՌՉԱԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Արթուր Միքվաբիան նշանակվել է ինքնահռչակ Աբխազիայի վարչապետ: Ինքնահռչակ հանրապետության նախարարների կաբինետի նոր վարչապետին ներկայացրեց Ռաուլ Խաջիմբան:

Ինչպես արդեն հաղորդել էինք, նախկին վարչապետ Բեսլան Բուբբան պաշտոնաթող էր եղել մարտի 16-ին: Որպես պաշտոնաթողության պատճառ Բուբբան նշել էր, որ իրեն զրկել են պարտավորությունները կատարելու հնարավորությունից, քանի որ վարչապետի գործառույթների կատարումը նրա կարծիքով, փոխանցվել է երկրի «նախագահի վարչակազմին»:

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՀՍՏԱԿ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դեն սկսվել է վարչական ծախսերի կրճատումը, ընդ որում՝ այդ կրճատումը չի անդրադառնում սոցիալական եւ ենթակառույցային նախագծերին: «Մենք ընդունել ենք որոշում առավելագույնս նվազեցնել վարչական ծախսերը, սակայն կրճատումները սոցիալական եւ ենթակառույցային նախագծերին չեն առնչվի: Մենք, ինչպես գիտեք, տարածաշրջաններում իրականացնում ենք մի շարք սոցիալական նախագծեր, որոնք փոքրիշատե կբարելավեն մարդկանց վիճակը»,- հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքերով, տարիների ընթացքում կուտակված հիմնախնդիրները մեկ օրում լուծել հնարավոր չէ: «Մենք գերադասում ենք անկեղծ խոսել բնակչության հետ եւ հնարավոր ամեն ինչ անում ենք, որպեսզի մարդիկ իրենց զգան առավել պաշտպանված: Եվ, ամենակարեւորը, մենք պետք է մարդկանց պատմենք, թե ինչպես ենք մտադիր առողջացնել էկոնոմիկան»,- հայտարարեց վարչապետը:

Վարչապետը հայտարարեց, որ ընթացիկ տարվա սեպտեմբերին ծրագրում են 17 տոկոսով ավելացնել ուսուցիչների աշխատավարձը:

ԱՌԱՎԵԼԱԳՈՅՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին մամլո ասուլիսում հայտարարեց, որ իր գլխավորած կառավարությունն առանձնակի ուշադրություն է հատկացնում տարածաշրջանների զարգացմանը: «Մենք բազմիցս հայտարարել ենք, որ երկրի համար տարածաշրջանների զարգացումը վիթխարի նշանակություն ունի: «Ուժեղ տարածաշրջան, ուժեղ Վրաստան». ահա այսպես է կոչվում այն նոր նախագիծը, որի շնորհանդեսն օրերս անցկացրինք Սամցխե-Ջավախեթիում եւ, որն ուղղված է տարածաշրջանների ռազմավարական ու տնտեսական զարգացմանը: Նախագծի շրջանակներում կվերսկսեն աշխատանքը պարապուրդի ու անտեսության մատնված ձեռնարկությունները: Մենք առավելագույնս կնպաստենք գործարարներին, որպեսզի այդ ձեռնարկություններում ներդրումներ կատարվեն եւ մարդիկ սկսեն աշխատել: Կառավարությունը մանրամասն ուսումնասիրել է բոլոր տարածաշրջանների հնարավորությունները՝ բնական ռեսուրսները, տնտեսական ներուժը, մարդկային ռեսուրսները: Մենք մանրամասն տեղեկատվություն ունենք, թե ինչ պետք է արվի առանձին վերցրած յուրաքանչյուր տարածաշրջանի զարգացման համար»,- ընդգծեց վարչապետը:

«ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ»

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին մամլո ասուլիսում անդրադարձավ լարիի կուրսի անկման թեմային: Նրա խոսքերով, այն առաջին հերթին պայմանավորված է տարածաշրջանում ստեղծված ծանր իրավիճակից: «Դա Ուկրաինայում պատերազմն է, Ադրբեջանում, Ռուսաստանում, մյուս հարեւանների մոտ տնտեսական վիճակի վատթարացումը, ինչը թուլացնում է մեր տարադրամը, թեպետ վերջինիս անկումը շատ ավելի դանդաղ է, քան հարեւան երկրներում»,- նշեց վարչապետը:

Իրակլի Ղարիբաշվիլու խոսքերով, լարիի կուրսի նվազումը բացասաբար անդրադարձավ փոքր եւ միջին գործարարության վրա, որոնք հիմնված են բանկերից վերցրած վարկերի վրա, ինչը թանկանում է: «Սակայն դա Վրաստանի կառավարության սխալ քաղաքականության արդյունքը չէ, այլ տարածաշրջանում ստեղծված իրավիճակի օբյեկտիվ արձագանքը»,- նշեց վարչապետը:

Նա անհիմն համարեց տնտեսական քաղաքականության հասցեին ուղղված քննադատությունը: «Մենք հնարավոր ամեն ինչ անում ենք լարիի ամրացման համար, եւ դրանում մեզ օգնում են միջազգային ֆինանսական հնստիտուտները: Սակայն Վրաստանի կառավարությունը ֆիզիկապես չի կարող հաղթահարել այդ գործընթացները»,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց՝ հուսով եմ, որ մոտ ժամանակներում լարին կկայունանա: Նա բանկերին կոչ արեց բնակչությանն օգնել վարկերի ժամկետների հաղթահարման գործում:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ՊԱՇՏՈՆԱԹՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

Վրաստանի վարչապետի հավաստմամբ, մոտ ժամանակներում նախարարների կաբինետում փոփոխություններ իրականացնելու մտադրություն չունի: «Բնականաբար, չեմ կարող ասել, որ բոլոր նախարարների աշխատանքն ինձ բավարարում է, սակայն նրանք աշխատում են՝ ինչպես կարող են, եւ ներկա դրությամբ որեւէ նախարարի պաշտոնաթողության մասին հարց չի բարձրացվում»,- ասաց նա: Միաժամանակ, վարչապետը նախարարներին կոչ արեց առավել ակտիվություն եւ ինքնուրույնություն ցուցաբերել աշխատանքում: «Նրանք իրենց պետք է առավել դրսեւորեն, եւ դրանում մենք՝ որպես միասնական թիմ, շահագրգռված ենք»,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼԻ ԱՎԵԼԱՑՈՒՄԸ ՄԵՐ ԵՐԿՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆ Է

Նախորդ տարվա համեմատությամբ, 2014 թվականին օտարերկրյա անմիջական ներդրումների ծավալն աճեց: Այդ մասին մամլո ասուլիսում հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Նրա խոսքերով, դա նշանակալի ձեռքբերում է, եթե հաշվի առնենք տարածաշրջանում ստեղծված ծանր իրավիճակը: «Ներդրումների աճը, փաստորեն, նշանակում է վստահություն մեր երկրի նկատմամբ: 2014 թվականին օտարերկրյա անմիջական ներդրումները կազմեցին 1 միլիարդ 272 միլիոն դոլար, ինչը 39 տոկոսով գերազանցում է 2013 թվականի ցուցանիշը: Արտասահմանյան ներդրումների ծավալով առաջինը տրանսպորտի եւ կապի ոլորտներն են: Դրանցում կատարվել է 343 միլիոն դոլարի ներդրում: 295 միլիոն դոլար է ներդրվել շինարարության ոլորտում, 174 միլիոն՝ վերամշակող արդյունաբերությունում: Նշեմ, որ 2014 թվականին օտարերկրյա անմիջական ներդրումների ծավալն ամենախոշորն էր 2007 թվականից հետո»,- հայտարարեց վարչապետը:

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՐՏԱԴՐԻ'Ր ՎՐԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼ Է 64 ՁԵՌՆԵՐԵՑ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին մամլո ասուլիսում հայտարարեց, որ Վրաստանի մասշտաբով «Արտադրի'ր Վրաստանում» ծրագրի շրջանակներում արտոնյալ վարկերից ու ենթակառույցների ապահովումից օգտվել է 64 գործարար: Նրա խոսքերով, վերոնշյալ մարդիկ արդեն արդյունավետ գործունեություն են ծավալել: «Նախագծերի սպասվող ներդրման ընդհանուր ծավալը կազմում է 1119000000 դոլար: Այդ ծրագրում ներգրավված ձեռնարկություններն արդեն 2015 թվականի վերջին աշխատանքով կապահովեն ավելի քան 4 հազար մարդու:

Մամլո ասուլիսից հետո կանցկացվի կառավարության նիստ, որտեղ որոշում կընդունենք «Արտադրի'ր Վրաստանում» ծրագրի շրջանակներում եւս երեք նոր նախագծերի ֆինանսավորման մասին: Ուրախ եմ, որ այս ծրագիրը մեծ հետաքրքրություն է առաջացնում»,- ընդգծեց վարչապետը:

ՎԻԶԱ

ԳՈՐԾԱՐԿՎԵՑ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՅՑԵԳՐԵՐԻ ՊՈՐՏԱԼԸ

Ընթացիկ տարվա փետրվարից Վրաստանում սկսել է գործել էլեկտրոնային այցեգրերի պորտալը, որի օգնությամբ զբոսաշրջության կամ գործնական նպատակներով Վրաստան այցելող օտարերկրյա քաղաքացիները կարող են շրջանցելով Վրաստանի հյուպատոսական հաստատությունները, ստանալ էլեկտրոնային այցեգիր:

Ներկայացնելով էլեկտրոնային այցեգրի ստացման համացանցային տարբերակը, Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Վլադիմիր Գուրգենիձեն եւ Վրաստանի ԱԳ նախարարության հյուպատոսական դեպարտամենտի ղեկավար Գիորգի Տաբատաձեն նշեցին, որ էլեկտրոնային այցեգիր ստանալ ցանկացողները պետք է գրանցվեն www.evisa.gov.ge կայքէջում:

Ինչպես նշեց ԱԳ փոխնախարարը, էլեկտրոնային պորտալի հիմնումը պայմանավորված էր նրանով, որ անցյալ տարվա սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել այցեգրային կարգավորման օրենսդրական նոր համակարգը: Այն, իր հերթին, պայմանավորված է երկրի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններով, որոնք նախատեսում են Վրաստանում արտագաղթի հոսքի կարգավորում, ապօրինի արտագաղթի կանխում:

Նշենք, որ երկրի իշխանությունների կողմից այցեգրային պայմանակարգի խստացումը քննադատության մեծ ալիք առաջացրեց: Ընդդիմախոսները կառավարությանը մեղադրում էին նրանում, որ ներդրած սահմանափակումների արդյունքում, զգալիորեն նվազել է զբոսաշրջիկների թիվը: Այդ մասին են վկայում նաեւ վիճակագրական տվյալները: Համաձայն դրանց, 2014 թվականի օգոստոսից զբոսաշրջիկների թիվն սկսել է նվազել: Ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածում Վրաստան ժամանածների թիվը, նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, նվազել է 2,1 տոկոսով:

Ինչպես նշեց Վլադիմիր Գուրգենիձեն, մի կողմից այցեգրային կարգավորումների իրականացումը պարտադիր է, այն ելնում է պետության շահերից եւ նախատեսում է որոշակի սահմանափակումներ: «Թեպետ մյուս կողմից՝ Վրաստան ժամանող զբոսաշրջիկը կամ գործարարը պետք է ունենա դյուրությամբ այցեգիր ստանալու հնարավորություն»,- ընդգծեց փոխնախարարը եւ հավելեց, որ շատ զբոսաշրջիկներ

իրական հանգստի համար նոր պորտալի գործարկումը զգալիորեն դյուրացրել է այցեգիր ստանալու ընթացակարգը: «Մենք չենք կարող հրաժարվել այն օգուտից, որը երկրի էկոնոմիկան ստանում է միջազգային զբոսաշրջության շնորհիվ, ուստի այցեգրերի հանձնման ընթացակարգի դյուրացումն արտակարգ նշանակություն ունի»,- ասաց Վլադիմիր Գիորգաձեն: Նրա խոսքերով, նոր պորտալի գործարկումը բացառում է այցեգրի ստացման համար մի շարք փաստաթղթերի ներկայացման եւ հյուպատոսություն այցելելու անհրաժեշտությունը: Առավել եւս, որ հյուպատոսական հաստատությունները հիմնականում գտնվում են արտասահմանյան երկրների մայրաքաղաքներում, եւ քաղաքացիներն այցեգիր ստանալու համար ստիպված են լինում լինել մայրաքաղաքում հյուպատոսության ծառայությունից օգտվելու համար, ինչը կապված է լրացուցիչ ծախսերի հետ:

Ինչ վերաբերում է համացանցային կայքէջում գրանցմանը, ապա, դիմորդները պետք է մանրամասն ծանոթանան էլեկտրոնային այցեգրի ստացման կանոնների ու պայմանների հետ: Վրաստան ժամանել ցանկացող յուրաքանչյուր օտարերկրյա քաղաքացի, վիզայի ստացման համար, պետք է անցնի եռաստիճան ընթացակարգ: Նախ, գրանցելու է իր դիմումը, ապա՝ իրականացնելու պարտադիր վճարումները եւ, վերջապես լրացնելու է էլեկտրոնային այցեգիրը: Փաստաթղթի արժեքը կազմում է 50 դոլար, դրան ավելացրած 2 տոկոսը՝ կոմիսիոն սպասարկումների համար:

Վրաստանի ԱԳ նախարարության հյուպատոսության ծառայության ղեկավար Գիորգի Տաբատաձեն նշեց, որ ձեւաթղթի լրացման սկզբում, երբ քաղաքացին գրանցում է իր տվյալները քաղաքացիության վերաբերյալ, ծրագիրը նրան տեղեկացնում է, թե ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնի այցեգրի ստացման համար: Գրանցման եւ սպասարկումների սակագնի վճարման ընթացակարգից հետո, դիմորդը էլեկտրոնային փոստով ստանում է ծանուցում այն մասին, որ սկսվել է նրա դիմումի քննարկումը: «Առավելագույնս տասն օր անց դիմորդը ստանում է կոնկրետ պատասխան: Եթե այն դրական է, ապա դիմորդը ստանում է պատրաստ էլեկտրոնային այցեգիրը, որը տպվում է պրինտերով եւ այն անձնագրի հետ ներկայացնում է Վրաստանի սահմանակետում: Եթե պատասխանը բացասական է, ապա դիմորդը ստանում է պաշտոնական փաստաթուղթ, որտեղ ներկայացվում է այցեգրի մերժման կոնկրետ պատճառը»,- նշեց Գիորգի Տաբատաձեն: Նրա խոսքերով, նոր պորտալը առավել նպատակահարմար է այն անձանց համար, ովքեր մտադիր են Վրաստան ժամանել կարճաժամկետ այցերով:

ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԴՅՈՒՐԱՑՎՈՒՄ ԵՆ

Վրաստանի կառավարությունը որոշում է ընդունել դյուրացնել օտարերկրացիների Վրաստանի այցեգրի հանձնման ընթացակարգը եւ ընդհանրապես դյուրացնել այցեգրային կարգավորումները:

Փոփոխություններ են կատարվելու մի շարք օրենսդրական նորմերում, որոնք ընդունվել էին խորհրդարանի կողմից «Օտարերկրացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակի մասին» օրենքում եւ, որոնք ուժի մեջ էին մտել 2014 թվականի սեպտեմբերի 1-ից:

Օրինանախագծի համաձայն, որի հեղինակներն էին Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման, ներքին գործերի եւ արդարադատության նախարարությունները, կառավարության նախաձեռնությամբ, արդեն ներկայացվել է խորհրդարանի քննարկմանը:

Նախագծի շրջանակներում նորամուծություններից մեկն առնչվում է Վրաստան այցելելու այցեգրի հանձնման լիազորություն ունեցող մարմինների ցուցակի ավելացմանը: Այցեգրի հանձնման մասին որոշումն անմիջականորեն ընդունում է Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը: Հետեւաբար, վրացական այցեգրեր հանձնող Վրաստանի արտասահմանում գտնվող դիվանագիտական ներկայացուցչություններին ու հյուպատոսական հաստատություններին եւ սահմանագծում այցեգրեր հանձնող Վրաստանի ՆԳ նախարարությանն ավելանում է նաեւ Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը:

Բացի այդ, ներկայացված նախագծում նախատեսված է այն օտարերկրացիների այցեգրի հանձնման կարգը, որոնց երկրներում վրացական դիվանագիտական ներկայացուցչություններ եւ հյուպատոսական հաստատություններ չկան:

Բացի այդ, այցեգրերի հանձնումը դյուրացնելու նպատակով, Վրաստանի ԱԳ նախարարությանը տրվել է էլեկտրոնային այցեգրեր հանձնելու լիազորություն: Օրինանախագծում նաեւ այլ կերպ է պարզաբանվում «հրավեր» հասկացությունը:

(Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ